

ԹՂԺԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԴԲԵՐ

ՂԻԿԵԼՈՒ ՀԱՍՅԷ


M. BENIARD

Poste Restante

Londres. [Angleterre].

Ամեն բան ժողովրդի միջոցով, ժողովրդի կամքով և ժողովրդի համար:

Իւրաքանչիւրի և բնդհանուրի հաւասարապէս բարեկեցիկ կեանք — զաւ Զշմարիտ ազատութիւն:



ԲԱԺԵՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՄԷՆ ՏԵՂԵՐԻ ՀԱՍԱՐ

ՏԱՐԵԿԱՆ. 5 ֆրանկ,
ԿԷՍ ՏԱՐԻԱՆ. . . . 3 " "
ՄԻ ՀԱՄԱՐԸ. . . . 1/2 " "

Ժողովուրդ, դու ինքդ միայն կարող ես ձեռք բերել բո ազատութիւնը:

Արեան շահիճներ — ահա ազատութեան շանապարհը:

Ժողովուրդ, մի աղիւսիւ, այլ պահանջիր և ձեռք բեր:

ԵՐԳԻԾԱՐԱՆԱԿԱՆ—ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԳԻՍ

Ա Ռ Ա Ջ Ի Ն Տ Ա Ր Ի


Լ Օ Ն Դ Օ Ն

Nr 11 ՄԱՐՏ Nr 11

1895

Մ Ի Ա Մ Ա Ե Ա Յ

Ն Ե Ր Կ Ա Ն



ՊԵՏԱՆԻՆ ԻՐ ԱՐԵԱՆ ԳՆՈՎ, 24ՏՈՒՄ Է ԴԷՊԻ ԱՅՆՏՈՒԹԵԱՆ ՄԵՅՐԱԿԱՆ ԳԻՐԿԸ, ՄԻՆ ԶՕՆ-ԲՈՒՂ ԽՈՐԻՆ ԿԵՐ-ՊՈՎ, ՄՏԵԾՈՒՄ Է ԻՐ ԵՐԵՏԵՍԵՐԴՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԱՆՔՆԵՐԻ ՄԵՍԻՆ — ԽՈՍՏՈՒՄՆԵՐ. . . ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ. . . ԲԱՌԵՐ ԱՐԴԵՕՒ. . .



ՈՒՐ ԷՐՔ ԳՈՒՔ.

Փոթորիկն անցնելու վրայ է... Այդպէս է ընդհանուր կարծիքը: Արդեօք դա նրանից է, որ գարնան օրերն են ծագել և վարդագոյն յոյսերն ամենքի սրտերում խաղում են... Գարնան օրեր... Ո՛րքան, որքան տարի — հիմա ութերորդն է գնում — այդ օրերն եկան ու անցան, որքան յոյսեր բերին ու տարան, որքան նորից ծագեցրին, բայց փոթորիկը միշտ ապառնական կերպով կանգնած՝ նորանոր հեղեղների ու շանթերի նախագուշակ էր լինում:

Սոսկալի մարտը, ութ տարի սրանից առաջ մի բուռ մարդկանցով սկսված, աճեցաւ, մեծացաւ և ընդունեց հսկայական ծաւալ. հազարաւոր, տասնեակ հազարաւոր մարդիկ մտան նրա մէջ, եղան զինուոր, եղան աշխատաւոր մեծ գործի... մինչև որ եկաւ հասաւ այս օրւան օրը, նախընթաց օրը դարեւոր ստրկութեան անկման և բուռն կերպով ըզձացած ազատութեան...

Բայց այս օրն է... Ամեն-մի ծակ ու ծուկից ամեն տեսակ որդներ ու ճճիներ, զանազան սողուններ ու գորտեր դուրս են գալիս, առաջ են գցում իրանց, ի ցոյց են իրանց հանում, սուլում, շշում, ճշում, կոկոռում... Գրանց լեզուները հասկացողները հաւատացրելով են, որ նրանք իրանց անուններն են հընչեցնում ի լուր աշխարհի, որ նրանք ասում են, թէ այս մեծ օրւայ պատիւն ու փառքն իրանց է պատկանում, որ նրանք իրանց սուրբներով ու կոկոռներով մեծ գործի լուծման մեծ օրն առաջացրին, որ ամեն բան նը-

րանք են, նրանց միջոցով է եղել և որ այլ կերպ չէր էլ կարող լինել... Եւ նրանք պահանջում են, որ իրանց պսակեն դափնիներով... տատասկի սիրահար չեն նրանք...

Տատասկ... և ինչո՞ւ համար... Տատասկը բաժինն է նրանց, որոնք տարիների ընթացքում քրտինք ու աշխատանք թափեցին, իրանց ոյժն ու անձը նուիրեցին ժողովրդային գործին, իրանց արիւնքով ներկեցին հայրենի հողերը և իրանց մահով կեանք տվին հազարաւոր, միլիոնաւոր մեռած ժողովրդին... Տատասկը դրանց համար է... Իսկ որդները, ճճիները, սողուններն ու գորտերը, որ այդ մեծ կուռի ժամանակ պահված էին իրանց տաք բոյներում, այսօրւայ գարնան օրերում՝ դուրս են պրծել և իրանց խառնաշփոթ ու զզուելի աղմուկ սուլում են տատասկ կողմ մարտնչողներին և գաղափարող ու նախանձով գողանում են դրանց գլխից դափնիներն՝ իրանց տգեղ, տափակ ճակատները զարգարելու համար:

Ո՛ր էիք դուք, ուրիշի ձեռքով կրակ հաւաքողներ, երբ մարտադաշտից արիւնլւայ մարտնչողն օգնութեան էր կանչում: Ո՛ր էիք դուք, երբ շղթաներով կաշկանդված մարտնչողին դահիճը տանում էր գէպի կախաղան, երբ Հայաստանում յեղափոխական ամեն-մի զինուորի սիրտն էր արիւնով լքցվում և ոգևորված՝ մեծ կոկոռներում նա գնում էր գէպի մահ: Ո՛ր էիք դուք, երբ «Հնչակն» իր կոչն էր հնչեցնում, երբ նրա կոչին Հայաստանում հազարաւորներ էին ձայն տալիս և նրա առաջացրած սուրբ գործի յաղթութեան համար Հնչակեանի արիւնն էր խօսում, Հնչակեանի մահն էր կենդանի աղաղակ հանում, Հնչակեան Սասունի ապառաժներն էին անգամ բարբառում:

Մեծամիտ, պոռոտախօս, ինքնագով, ինքնագոհ, չաղ-չաղ տեղեր բռնած, անձնական կեանքի ետեւից ընկած՝ կուռի միջոցին դուք լուռ էիք:

սակարգին կենսական ծուծը, այն դարաւոր լուծը, որ դրած ժողովրդի վրին վրայ մինչև օրս գործածեցին իրենց շահերուն համար: Եւ այժմ էլ կսպառնան ժողովրդին, որ յարգեն իրենց նախահայրերու տգիտութիւնը, այլանդակ նախապաշարունակները եւ ստրկութիւնը, ապա թէ ոչ նղովք կը կարգան, կանխեն, բանտ կը ձգեն, կը շղթայեն, կ'ըստորեն եւ կախաղան կը հանեն... Այդ վայրենիութիւնով ալ չը բաւականաւոր, նոյն այդ խեղճ ժողովրդի գլխին նստեցուցած են այնպիսի անձեր, որ կարծես երգուընթաց են փճացնել ամբողջ նոր սերունդը: Մէկ կողմէն հասարակութիւնը ստիպված է իր դատերոյ յանձնել պոռնիկ կանանց էֆէմերներուն, միւս կողմէն մեր գաւառները ստիպված են իրենց կըրթութիւնը ստանալ փողոցի ու գինետան սրիկներէն:

Գալուն լռելի, նա թաղվեցաւ խորը մտածութեան մէջ. լուռ էին և միւս ընկերները, մինչև որ ուստա Արմէնը խզեց լուռութիւնը եւ հառաչելով աւելացրեց.—

— Ի հարկէ, անոնց գործին աւելի կուգայ որ մէյնսնէներու մէջ ինկած ճէմքեանի պէս անբարոյական մարդիկը դասատու դառնան, որ...


— Այսօր այդ շուկայի երեսի շները մեր գլխուն հազար օյններ խաղան, անհամբերութեամբ Արմէնի խօսքը կտրեց Համբար վարպետը:

— Ժողովրդի բարեկամներն անարգուն, կիներն ու օրիորդներն պնդատուն և խեղճ էս նախներու քրտինքի պտուղն եղող փապոթեաներն այսօր... բարկացաւ ծերունին, ծալապատիկ շտկուելով:

— Հիմա օյն խաղալու կարգը մերն է: Դալթ տա դալանըն ճանը չըգտնը՝ (տակը մնացողին հո-

ձեր ծակերը մտած և վախկոտ անամոթների պէս անհամբեր սպասում էիք, թէ երբ կուրդ դադար կառնէ: Եւ երբ դադար էր առնում, դուք, սողուններ, դուք, գորտեր, ճճիներ, յանկարծից դուրս էիք պրծնում ձեր տաք բոյներից և անպատուելով, գործիչի, աշխատողի ու նահատակի անունները, նրանց աշխատանքի, արեան ու մահի գնով ձեզ առաջ գցում, ամեն բան ձեզ վերադրում, ուրիշի պատիւ, անուն, փառք, գործ, պսակ ամենը իւրացնում ամենալեզուի մեծախօսութեամբ և ապա ճիգ թափում՝ գործիչների ոտի տակ փոս փորել, նրանց անարգել, նրանց վատաբանել...

Անդամ գողեր ուրիշի գործերի, այո՛, բոլոր ձեզ նմանները ձեզ կը հաւատան: Արեք, կատարեցէք ձեր նսեմ գործը և հռչակեցէք ձեզ ազգի փրկիչներ... «Հնչակն» ու Հնչակեանները, սակայն, ունեն մի մեծ գաղաւոր, արդար ու անկաշառ, որ պատմութիւնն է. սա իր հզօր ձայնով ձեզից իւրաքանչիւրին կը գամէ իրան արժանի տեղը... Իսկ մինչ այն, նորագոյն հոսոսներ, յարձակվեցէք կախաղանից կախված Հնչակեանի դիակի և արիւնով ներկված «Հնչակի» ու Հնչակեանի դէմ: Ձեր դերը միայն դա է ձեր կարողութիւնն էլ միայն դա է, ո՛վ դուրս պրծած ծաղրածուններ...



ԻՌՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ.

Իմ ոտքերիս տակ ժողովուրդները, Իբր ոչխարների տվմար հոտերը, Գտնում են իրանց բաժինն արժանի, Զաղիր խաժամուժ, բընաւ պիտանի:

գին թող ելնէ), աւելացրեց Միրզանը, բուռնցքը սեղանին խփելով:

Լսողից արաղաղը մի քանի անգամ թափ պվեց իր թեւերը, յետոյ քնաթաթախ, բայց ակորժելի ձայնով կու-կու-լի-կու կանչեց. դռանցիների աքաղաղներն էլ նոյնը կրկնեցին: Պառու մամին սրափում էր. նրա քնից թուլացած գլուխը հանգիստ չէր մնում իր պարանոցի վրայ, մէկ աջ, մէկ ձախ էր ընկնում եւ իր թառամայ շղթաներով շնչելու տեղը վիւղում էր: Նստողներն իրար երես նայեցան. ժամանակն անդալի կերպով սահել էր:

— Այդ շանը «հոգոցն» էլ կարգացած սեպեցէք, ասաց Մայիսամին Պատիկը եւ ոտքի ելաւ. յետոյ ժամացոյցին նայելով աւելացրեց, ժամանակն անցեր է, Գէլի-Խուրշիդը վերջը կը բռնէ մեզ:

— Եթէ բանը Գէլի-Խուրշիդին մնաց, Աստուած ողորմած է. մէկ օրս արաղը անոր բերանը կը գոցէ:

— Պապի, բարի գիշեր, ասաց Համբար վարպետը. մեր խօսքերուն ետքը չը գտր, բայց մի-եւնոյն ասեն պէտք է մտածել, որ դործի մարդ ենք, պէտք է քիչ մը քնանալ, որ կարողանանք աշխատիլ:

«Գիշեր բարի», ասացին եւ միւսները. ծերն աջողութիւն մաղթեց նրանց. իսկ Միրզանը խօսք տվեց շուկայում նրանց հետ տեսնվել:

II

ՎՃՈՒՆ

Թէրս- Ախան պստիկ գետակն իրան համար օձապտոյտ ճանապարհ է բաց անում Ա... բաղադրեց գէպի Պամսն ձգվող ճանապարհի վրայ: Իր երկու եղբայրների վրայ

ԱՐԵՒԱԾԱԳԻՆ

ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

ՆՈՒՐԻ ՏԻԿԻՆ Մ. Ն. . . ԻՆ.

(Հարունակութիւն) *

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

I

ՕՐԻԱՅ ԽՆԴԻՐԸ

— Բայց զարմանալին այն է, — շարունակեց Գալուն աւելի եռանդով, որ այդ կարծեցեայ ստահակները, այդ սրիկաները, ազգին շահը չը մտածող մատնիչներն են, որ այսօր ամեն վրտանդ աչքի առած, առանց նիւթական որ եւ է վարձատրութեան անկախութիւն ունենալու՝ մտեր են ժողովրդին մէջ եւ անոր բերնով միշտ կը բողբոքեն ամեն անիրաւութիւններու դէմ: Անոնցմէ շատեր կախաղան ելան, շատերը սպանվեցան կուռի մէջ, շատերը աքսորվեցան եւ խիստ մեծ բազմութիւն մ'ալ տաճկական բանտերուն մէջ ձգուած են շղթայակալ, աւտօթի ծարաւ ու մերկ: Միեւնոյն ատեն իրենց այդ անտանելի դրութեան մէջ կը կրեն այն սոսկալի տանջանքները, որ բարբարոս սուլթանի արիւն կզակ պաշտօնեաները միայն կտրող են ստեղծել: Մեր նոր առաքելները եւ մեր նոր աւետարանը, ըսել կուզեմ «Հնչակն» ու իր գործիչները, իրենց երեւան գալէն ի վեր՝ ժողովրդի իսկական շահերուն ճշմարիտ պաշտպաններ՝ միշտ մատնացոյց կրնեն այն լուծը, որ փտեցուցեր է հասարակութեան, մանաւանդ ուսմիկ դա-

*) Տես «Ապոստոլ» Nis 7, 8, 9 և 10

Պատիժն եմ ես նրանց, նրանք՝ ստրուկ իմ ձեռքի-
նեւ տէր եմ հըզօր նրանց անձայն կամքին.
Գատաւոր ահեղ մեղակս բարձունքում՝
Ես նրանց պահում եմ ամուր կապանքում:
Որպէս որդերի՝ կոխում եմ ես նրանց.
Ամրապինդ շղթան, խաւարն անթափանց
Տըգեղութիւնը, բանտ ու կախաղան
Չէնքերս են նրանց դէմ անգութ, դիւական
Ես հրամայող եմ լէգէօններին,
Ինձ միշտ հընազանդ զօրաբնդերին,
Եւ այն բոլորի, որ իմ գիմացը
Գողում է, սարսում, զսպում իր լացը:
Ես թշնամին եմ բոլոր արգարի,
Ուր նա հանում է իր ձայնն արի.
Ես ստուգեմ իսկ վանել եմ ազատութեան
Նգովքով անսահման խորոխութեան:
Ես հրէշ եմ անկուշտ բազմութիւնն ծրծող,
Նրա աշխատանքը միշտ անյադ լափող.
Բիւրաւորների կեանքը մահացրած՝
Ես իմ ստամոքսն եմ նրանցով լեցրած:
Արհա, կատաղի, անզուսպ, սանձարձակ՝
Ճնշել, խեղդել եմ կամով բացարձակ:
Այն ամենն, ինչ որ դէպ լցւոյ է տանում,
Ինչ ճշմարտութեան է ուսուցանում:
Ես բիրտ, չար ոյժն եմ, գողող յաղթութիւն,
Ազատ շնչի թոյն, նըշաւակութիւն,
Արեան հեղեղի աղբիւր անբաւոյ,
Երկրի և մարդկանց ոսոխ մեծափառ:
Աստուած եմ բոլոր ժողովուրդներին,
Յաւերթ միակ տէր նրանց ճակատագրին.
Ես թագաւոր եմ, նրանք՝ գերի անբան,
Նըրանք ոչինչ են, իսկ ես՝ ամեն բան:
23 Մարտի 95. ԽԵՆԹԸ.

„ՏԻԵԶԵՐԱՎԱՆ“ ՄԻՈՒԹԻՒՆ

ՏԵՍԱՐԱՆ

(Հարունակութիւն և վերջ *)

„Արմենիա“ ներկայացուցիչ ճառից յետոյ
Ժողովին տիրել էր ընդհանուր շփոթութիւն.

*) Տես „Ապտակ“ № 10.

ցրված են քաղաքի պարտէզները, այգիները, որոնց
առատ ջուր է մատակարարում այդ Սուլթան-Օվա-
յի օրհնութիւնների բնական աղբիւրը եղող գե-
տակը: Քաղաքից երկուս ու կէս ժամ հեռավորու-
թեան վրայ նա չընկալուած է զանազան տեսակ
պտղատու և անպտուղ ծառերով: Ահա միւս քե-
թի (սեւահող) խոշոր խնձորները, որոնց փափուկ
թշերին բնութեան վրձինը դրոշմել է հիանա-
լի, յափշտակիչ կարմրութիւն. նրանք ամաչկոտ
կոյս աղջիկների նման, թաք կեցած կանաչ տերե-
ւների ետեւ, ժպտում են անցորդներին և բռնի
գրաւում նրանց ուշադրութիւնը: Ահա ջրալի,
թթուաշ, համեղ գեղձերը, որոնք բարակ աղուա-
մաղով ծածկված շատակեր մանուկների նման
իրանց մօր ստիճից, փոքրիկ ցածր ձիւղերից
կախված՝ միշտ դէպի վայր են ծռում նրան և եր-
բեմն մինչև իսկ իրանց չարութեամբ կոտորում
Սեխերի, ձմերուկների ստուար քանակութիւն,
ծոյլ ուխտարների նման, արտերի մէջ շարված
հանդիստ են անում: Քիչ հեռուն, իր դալար
ձիւղերից կազմված անշուք խրճիթում, օգի տա-
քութիւնից թուլացած և իր արմուկների վրայ
յենված թիւրք բոստանջին ինքնաբաւական կեր-
պով դիտում է նրանց, ապա ոչնչեքիւր Ալլահ
(փառք քեզ, Աստուած) կարգալով, խորատուգլու
ջէննէթական երազներում: Վայրի անխնամ թթե-
նիներից կազմված մի ցանկապատ չընկալուած
է նրանց, մի կողմից պաշտպանելով թշնամու դէմ
միւս կողմից իր տերեւներով առատ կերակուր է
մատակարարում շատակեր շարաններին, շերամե-
րին: Արթատունկերի տակից աղբիւրները թթու
դէմքով դիտում են շոտից անցուդարձ անող
ճանապարհորդներին և նրանց բերանի ջրերը
վաղցնում:

Գետակի երկու ափերի վրայ լայն ուռնի-

նմանք տաքացած էին, ումանք ծիծաղում էին,
վմանք էլ հանդիսաւոր կերպարանք էին ըն-
դունել:

„L'Arménie“ - ի ներկայացուցիչը. — Պ. Նա-
խագահ, իմ խնդրեմ խօսք: Գլխաւորապէս
յարաբերութեանց մէջ բաղադրականութեան նշա-
նաբանն է հաշտութիւնը: Այդ մեծ դասին կը
հետեւի. ես հաշտ եմ ամենու հետ, առանց
գոյնի, ուղղութեան և սկզբունքի խտրութեան:
Մէկ ձեռքս կուտամ ասոր, միւս ձեռքս կուտամ
անոր, երրորդ ձեռք մ'ալ ունենալի, ան ալ
կուտայի և դիւանագիտաբար հաշտ կըլլայի ա-
մենու հետ:

Պ. Թումայեան (յանկարծ ժամացոյցն է նայում,
վեր թռչում և աճապարանքով իր գլխարկը փռնու-
ում) — Ներողութիւն, տիարք. երեք ժամ
դրութիւն ունիմ. . . պիտի ուշանամ. . . և ու-
շացայ արդէն. . . Այսօր ժամանակ չունիմ. . .
Միութիւն, այո՛. . . դասախօսութիւններ մանա-
ւանդ աղէկ են. . . Ես իմ գործս ունիմ. . . Ի՛հ,
միւս ժողովին կուգամ. . . ժամագրութիւնը չը
խանգարէ նեւ. . . (արագ-արագ դուրս է գնում):

„Գրօշակի“ ներկայացուցիչը, տաքացած. —
Ինչպէս մենք կարող ենք միասնաբանի որ մեր գո-
յութեան ամբողջ ալիք և օմեղան (այլ և ֆէն)
դէպքեր ունենանք մէջն է, նրա դասինները
խորակներու, նրան կործանելու համար ենք աշ-
խատում և նրա աղղու ենք մտել այս գործի
մէջ: Եթէ միանանք, մեր գոյութեան այդ սուրբ
իրաւունքը, մեր raison d'être-ը ունենում է
այլ ևս և մեր սրբազան արշաւանքը „Հնչակի“
դէմ, ուրեմն և մեր գոյութիւնն, այլ ևս աւարտ է
ստանում. . . Ո՛հ, մենք այն ժամանակ միայն կը
միանանք, երբ „Հնչակը“ ունենանք, ցանկից
դուրս հանէք: Այն ժամանակ մենք մեր մու-
րազին հասած կը լինենք և „Հնչակի“ ձեռքով
կրակից հանած շահանակները մեծ ակտիւսով
կուտենք պատուելի հասարակութեանդ հետ
միասին մեր պանծալի միութեան մէջ. . . (նա
վերջացնում է իր խօսքը հանդիսաւոր կերպով,
իբրև մի մեծ ու դժուար յաղթութիւնից ելած. . .

„Արմենիա“ ներկայացուցիչն այնքան ուժգին
կերպով է ծափահարում, որ ամբողջ մարմնով
դողում է):

Ներն իրանց կախ ձիւղերով ողջագուրվում են,
իրար շոյում եւ համբուրվում. նրանք կազմում են
մի սքանչելի դալար կամար, իրար փաթթված
ոստերն արգելում են ամուսնայ այրող արեւի
ճայռապայթներին չը թափանցել գետակում, ուր
զանազան տեսակ ձկնիկ լողում են սառը ջրի
խորքում և կանաչաւ խաղեր անում: Տեսնու տե-
սակ ծաղիկներ, անխնամ վայրի որթատունկեր,
կազող մորեններ, տարին տասներկու ամիս դալար
մնացող բոյսեր, օձաձեւ բարձրացող պատատուկներ
դիմաւորում են գետակին և ահապին թափողով
ծաղկեայ պսակների տակ, հանդիսապէս ստանում,
թափում են նրան Եւշիլ-Բրմագ մայր գետի ծո-
ցում. . . Նա օրհնում է ամենքին եւ իր առատ
բարիքներով վարձատրում, նա ամենքին էլ տալիս է,
իր սաւը ջրից եւ գովացնում աճեցնում:

Ամուսնայ սաստիկ տաք երանակին, օրը յա-
տուկ է Ա. . . ձորամէջ քաղաքին, նա, գետն, իր
պարտեզներով հիւրընկալում է քաղաքի բնակիչնե-
րին եւ նրանց պահպանում խեղդող օդի աղ-
բեցութիւնից. . . Այդ քաղաքն իր փոքրիկ շը-
ջակայով հիւսիսային յայնութեան 41-րդ աստի-
ճանի տակ ներկայացնում է մի փոքրիկ այրեցեալ
գօտի, անտանելի տաքը սկսվում է հէնց ապրիլի
սկիզբներից և հազիւ վերջանում հոկտեմբերի վեր-
ջերում:

93 յունիսի վերջերն էր: Օդերն անտանելի
էին դարձել: Տաք քամին վերցնելով կեղտոտ փո-
ղոցի փոշիները՝ պոտոյներ էր անել տալիս, պստիկ
թաթաւներ կազմում, իր հետ վերցնելով չոր
ձիւղեր, տերեւներ, յարդի կտորներ: Տեղւոյն բնա-
կիւնները խոյս էին տալիս Եւշիլ-Բրմագի եւ կամ
Թէրս-Ախանի եզերքների պարտէզները: Քաղաքի
հիւսիսային բողաղում մի գեղեցիկ պարտէզի խիտ
ծառերի շուքի տակ առանձնացած նստոսել էին

„Արա“ - ի ներկայացուցիչը. — Յոյժ գովելի և
գնահատելի և ցանկալի է „Հայքի“ մեծայարգ
ներկայացուցիչն տիեզերական միութեան գաղա-
փարը. . . բայց այստեղ պէտք է ըսել, որ „Հնչա-
կըն“ իր սօսիալիզմը պիտի թողու. այդ սօսիալիզմին
համար նա յոյժ պախարակելի է. . . Թէեւ Հա-
յաստանի մէջ արած իր գործերը ոչ որ հա-
յոցմէ արած չէ և չէ կարող անել և միակ գոր-
ծող ընկերութիւնն է ինքը. . . Բայց անսելով
„Հնչակին“ դէմ այդքան թշնամութիւն, կրօնմ
ձեզ, թէ ալ ինչու համար էք այս ժողովը
գումարել. . .

ՊԼՏԿԵՐ

„Արմենիա“ և „Գրօշակի“ ներկայացուցիչներն
ամբողջ թոքերով պոռում են՝ մի քնքշչ համե-
րաշխութեամբ համակված. — Ո՛հ, ո՛չ, երբեք, չենք
ուղեր „Հնչակը“. . . Առաջինն աթոռներն է կոտ-
րում, զարնելով նրանց գետնին, երկրորդը շա-
րունակ սեղանն է խփում բռնեցով: Նշախա-
գահութիւնն կուղեմ, նախագահութիւնն ա՛, որո-
տում է Յակոբեանն, ալ ու ձախ ընկնելով. . .
Ընդհանուր շփոթութիւն և իրարանցում. . . Ո՛հ,
վա՛ն տիեզերական միութիւն, զմութիւնն իմ
զտիեղերական. . . անհետ եղաւ, անհետ. . . Հա-
ռաւում է „Հայքի“ ներկայացուցիչը և ուշա-
թափվում. . . Գլխաւորապէս վաճառականներն իրա-
րանցման մէջ իրանց երեսներին վայր ընկած գի-
մակները փնտռելով՝ ողբաձայն աղաղակում են. —
դժանջան մեզ. . . վայ, պէ՛, ճանքմ, դիմակ կուղեմ,
դիմակ. . . — Ի՛հ, դու ա՛. ես միութիւն կուղէի,
որ հոն անգամ մա՛լ ես ըլլայի, մարդու տեղ անց-
նէի, փառքի. . . դմակ ալ ունենայի. . . ա՛լ որո՛ն
հոգ քո դիմակը. . . դժգոհ արտնջում է մէկ
անգամակ վաճառական. . .

Այդ րոպէին շփոթութիւնն ու իրարանցու-
մը ընդհանուր է. ձայն, աղմուկ, պոռոց. . . կա-
տարեալ հրէյական բաղար. . .

„Հնչակի“ ներկայացուցիչը, որ ամբողջ ժա-
մանակ լուռ էր ամենքին, ուսերը վեր
քաշելով և գլուխը թափ տալով գուրս է գա-
լիս ժողովաւոր ահից, ինքնիրան ասելով. —
„Մանլաս“:

Եթէ տղամարդ. Թաւշանման մարգագետնի վրայ
ձգված էին մի քանի կարպետ. մէջ տեղ դըր-
ված էր մի փոքրիկ սեղան, իր վրայ կրկնով արա-
ղի մի քանի բաժակ եւ մի քանի շիշ: Նրանցից
ոմանք երբեմն երբեմն լըցնում էին բաժակները
եւ դատարկում. այդ գաւաթների պարունակու-
թիւնն ուշադրութեամբ դիտողները կը նկա-
տէին, որ նրա մէջ ո՛չ թէ տար, այլ ջուր էին
լըցնում: միաժամանակ արաղի շիշը թաքցնելով
սեղանի տակ՝ „նորեկ հիւրերի համար է՛, ա-
սելով: Նրանք եթէն էլ լուռ էին, իրար երես էին
նայում, կարծես իրար համար բոլորովին օտա-
րականներ լինէին, եւ բաղդի բերմամբ միացած
այդ սեղանի շուրջը: Ո՛չ մէկն էլ չէր ուղղում
խղել իրանց այդ կամայական եւ խորհրդաւոր
լուռութիւնը. . .

— Դ՛նք կատարում ենք այսօր, ասաց վեր-
ջապէս նրանցից մին, մի դեռահաս երիտասարդ,
մեր պատմական դերը: Հայ ժողովուրդն այսօր
ընկել է այն արիւնոտ պատմական ուղիի վրայ, որով
անցել են մի ժամանակ եւրօպական ազգերը, եւ
որոնք փոփոխութիւնից փոփոխութիւն, դրութիւնից
դրութիւն անցնելով, վերջապէս տիրացել են
ներկայի բարձր քաղաքակրթութեան և չորպա-
ջիական դրութեան: Այդ քաղաքակրթութիւնից
եւ չորպաջական դրութիւնից օգտվւմ է միմիայն
ունեւոր հարստահարող տիրապետող դասակարգն
ի վնաս աշխատաւոր ընդհանրութեան, որը ոչ մի
բաժին չունի այդ քաղաքակրթութիւնից: Այդ
աշխատաւոր դասակարգի պատմական շահերը,
ձգտումներն այսօր պահանջում են հաւասարա-
պէս հանրամատչելի դարձնել այդ քաղաքակր-
թութեան բոլոր բարիքներն ու յաղթութիւնները
եւ այսպիսով բոլորովին նոր քաղաքակրթական
մարդկութեան պատմութեան մէջ: Ի՛նք, մեզ

